գնուաստութիւնն իմ, և վաղվաղակի վերոգրեալ անձն պատրաստեաց ի տան իւրում զխուց մի, և յոյժ ուրախ եղև ժողովուրդն վասն գալստեան իմոյ ասելով, թէ ահաւասիկ ի վաղուց հետէ սպասէաք այցելուի։ Եւ յետ խօսակցութեանց բազմաց գնացաք ընդ տէր Մանուէլին առ վիգարն տեղւոյս, և մատուցաք նմա զգիրն սրբոյ ժողովոյն, նունցին և եպիսկոպոսին. և մինչ նա ընթերցաւ զգիրն եպիսկոպոսին՝ ասաց ազդ առնել հայոց, զի յեկեղեցիս իւրեանց հաւաքեսցին, և ես փութով եկեալ ծանուցից ժողովրդեանն և յանձնեցից քեզ զեկեղեցին, և արար այնպէս ըստ որում ասաց, և յորժամ նա եկն ի յեկեղեցին հայոց՝ ունէր ընդ իւր զմի քանոնիք[1] և զսէկրիթարն եպիսկոպոսին, և զգրեանս իմ առաջի ժողովրդեանն ընթերցաւ, և ասաց նոցա թէ սա է հովիւն ձեր և պարտիք նմա հպատակիլ...։ Իսկ ի յերկրորդում աւուրն գնացաք առ մարքէզ փոթան, որ է յոյժ անուանի և է փոխանորդ բրինձին և ճէնուալին, զի սոքա ոչ են աստ այլ ի Վէնա..։ Եւ յետ այսորիկ գնացեալ զտաք զՁովհաննէս եպիսկոպոսն, որ է ժիր և առողջ, և ոչ նստի ի տան իւրում, այլ շրջի այսր և անդր, և ըստ մեծն մասին ուտէ ի տան մեծամեծաց, թէ ի մէջ հայոց և թէ ի մէջ ֆռանկաց, ոչ ունի զկեղտ անուն...։ Իզմիրցի տէր Մանուէլն ասաց ինձ. լաւ է որ յաւուր վերափոխ(մ)ան Աստուածածնայ պօնսիներօրն թագիւ պատարագիցէ.. նա և մի տիրացու եցոյց ինձ զտետրակ մի ասելով, թէ զսոյն երգս եպիսկոպոսն է շարադրեալ՝ փոխանակ Առաւօտ լուսոյին, զնա ևս արգիլեցի։ 3, 4 տիրացու ունին, որոց մինն աճէմ և ճնացեալքն են տեղացի, սոքա ամենեքեան լաւ ձայն ունին, սակայն այնպէս պոռան, որ ոչ երբէք ուրեք տեսեալ էի... զձայնաւոր պատարագն և փառք ի բարձունն ծնծղայիւք և զանկակօք առնեն, ասա է համբերելի և տանելի, երկայն շուրջառով, երկայն շապկով առնեն թէ զթիւ պատարագն և թէ զձայնաւորն...։ Ժողովուրդն միայն յաւուր կիրակէի և տօնի գան յեկեղեցին, այն ևս յառաւօտն և ոչ յերեկոյին, երբեմն Լցաք առաւօտուէն սկսին, երբեմն փառք ի բարձունէն, և երբեմն Տէր զի բազումէն...։ 35 տուն հայք գոն աստ, 25 ևս պէքեառ.. Հայոց տունն ոմն այս ինչ և ոմն այն ինչ տեղի, ոմանք կարի յոյժ հեռի են ի յեկեղեցւոյ. ամառն թօզ, և ձմեռն սաստիկ չամուռ լինի..... տեղւոյս կանայք խիստ բաց են, թէ արք և թէ կանայք խիստ գինեսէր են, նա և առանց ջրոյ ըմպեն զգինին, դառբուզով, լոկ սեխով, պոռկով, խըյարով, և ոչ հացով գինի և ոսխի խմեն։ Պատրոց վանքն գնացաք և խըյարէ թուռչի տեսաք, պարզ գինի տուին և մէզէյի տեղ հաց տուին, հացն մանտրեն և ի վերայ հացին աղ ձանեն և իբրև մեզէ մատուցանեն. խիստ բռնադատեն զմարդն, ջրով խմել չեն գիտեր, խըյարէ սալաթն կուտեն և ապայ ոսխին խմեն։ Ձկերակուրն ևս շատ կուտեն, ես միայն ըստ մարգարէին ջրով խմեմ, 3 մարդոյ ուսուցի ջրով խմել, որոց մինն կարի յոյժ տկար էր, հազիւ ի գիշերի 1 սահաթ ննջէր, կերակուրն և գինին կարգադրեցի, թէ այսպէս կեր և այնպէս խմէ, այժմ ուտէ և բարւոք ննջէ. կերակուր ուտել ևս չեն գիտեր, այս շողոյս ի մէջ կերակրին ահագին աղ, պիպէր, սղտոր, սոխ դնեն.....։

Նուաստագոյն ծառայ
Եղիա Վարդապետ

Ցամի տեառն 1732
յօգոստոսի 23
[Պելկրատ]

---

1. Ռէյմանտոս անուամբ, ինչպէս այլուր յիշատակուած է։